ԷԱԿԱՆ ՓԱՍՏԵՐԸ ԵՎ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՆԵՐԱՌՈՂ ՓԱՍՏԱԹՈՒՂԹ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԲԱՆԿ» ԲԱՑ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ, «ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ

Հայաստանի Հանրապետություն, 0002, ք. Երևան, Ամիրյան 23/1:

Հեռ.՝ (374 10) 510910, 8686

E-mail: bank@aeb.am

Էական փաստերը և տեղեկությունները ներառող հաշվետվություն թիվ 7, 24 մայիսի 2022թ.

տեղաբաշխված արժեթղթերի դասը՝ սովորական բաժնետոմս (բաժնային արժեթուղթ) և արտոնյալ բաժնետոմս (բաժնային արժեթուղթ)

արժեթղթերի քանակը՝ սովորական բաժնետոմս՝ 1,950,295 արտոնյալ բաժնետոմս՝ 424,600

արժեթղթերի անվանական արժեքը (արժույթը)՝ սովորական բաժնետոմս՝ 10,400 ՀՀ դրամ արտոնյալ բաժնետոմս՝ 15,000 ՀՀ դրամ

«ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ Խորհրդի 16/01-23.05.22թ. որոշմամբ նախատեսվում է «ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ Կանոնադրության 6.22 ժզ կետով Խորհրդին տրված իրավասության համաձայն՝ իրականացնել կանոնադրական կապիտալի համալրում 534,716,000 ՀՀ դրամ գումարի չափով:

«ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ Խորհրդի 16/02-23.05.22թ. որոշմամբ նախատեսվում է թողարկել 51,415 հատ սովորական բաժնետոմս՝ 10,400 ՀՀ դրամ անվանական արժեքով, տեղաբաշխել դրանք յուրաքանչյուրը 19,450 ՀՀ դրամ գնով: Տեղաբաշխվող բաժնետոմսերի ընդհանուր գումարային ծավալը (հաշվարկված մեկ բաժնետոմսը 10,400 ՀՀ դրամ անվանական արժեքով) կազմում է 534,716,000 ՀՀ դրամ, (մեկ բաժնետոմսը 19,450 ՀՀ դրամ շուկայական գնով հաշվարկած՝ 1,000,021,750 ՀՀ դրամ), որն ամբողջությամբ ենթակա է բաժանորդագրության:

Բաժնետոմսերի տեղաբաշխման սկիզբ համարել ՀՀ Կենտրոնական բանկի կողմից Ազդագրի գրանցման օրվան հաջորդող 45-րդ օրվա ժամը 09:00-ն, իսկ ավարտ՝ 30.12.22թ.-ի ժամը 16:00-ն: Մինչև նշված ժամկետը բաժնետոմսերի ամբողջ ծավալի բաժանորդագրության դեպքում Բանկը դադարեցնում է բաժանորդագրության գործընթացը:

ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀ ԱՐԱՄ ԽԱՉԱՏՐՅԱՆ